

Հավելված

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մայիսի 23-ի թիվ 157 Ն որոշմամբ

ԿԱՐԳ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ, ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՐՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ

Ապահովագրողների, վերաապահովագրողների հաճախորդների տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության բնականոն ընթացքի ապահովումն ու ապահովագրական ռիսկերի նվազեցումն է՝ ապահովելով այնպիսի տեղեկատվական համակարգի առկայություն, որում ներառվող տվյալների հիման վրա հնարավոր կլինի հաշվարկել ապահովագրական սակագին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ապահովադրի ապահովագրական պատմությունը:

ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը և պայմանները (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ապահովագրողների (այսուհետև՝ ապահովագրական ընկերություն), վերաապահովագրողների (այսուհետև՝ վերաապահովագրական ընկերություն) հաճախորդների տեղեկատվական համակարգի (այսուհետև՝ ռեգիստր) ստեղծման, ռեգիստրին տրամադրվող տեղեկատվության հավաքագրման և տրամադրման կարգն ու պայմանները:
2. Ռեգիստրը տեղեկատվական համակարգ է, որտեղ հավաքագրվում, պահպանվում և պահանջի դեպքում ապահովագրական ընկերություններին, ինչպես նաև սույն կարգով սահմանված դեպքերում ավտոապահովագրության պայմանագրերով ապահովադիրներին (այսուհետ՝ ապահովադիր) է տրամադրվում սույն կարգով սահմանված տեղեկատվությունը ապահովագրական պայմանագրերի, ապահովադիրների, ավտոմեքենաների, ապահովագրական պատահարների ծանուցումների, ապահովագրական պատահարների և հատուցումների վերաբերյալ, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է սակագների սահմանման, պահուստների հաշվարկման, ավտոապահովագրության գործունեության բնականոն ընթացքի ապահովման համար: Հավաքագրվող տեղեկատվությունն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) կողմից՝ ավտոապահովագրության բնականոն ընթացքը վերահսկելու և ապահովելու նպատակով:
3. Սույն կարգի իմաստով ավտոապահովագրության պայմանագիր է համարվում ավտոմեքենաների սեփականատերերի, ինչպես նաև այլ օրինական օգտագործողների կողմից ավտոապահովագրության պայմանագրով նախատեսված ավտոմեքենայի օգտագործմամբ այլ անձանց (ապահովագրական պատահարից տուժած երրորդ անձ) կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու հետևանքով ծագած պատասխանատվության (այսուհետև՝ պատասխանատվության) ապահովագրության, ցամաքային տրանսպորտին պատճառած վնասի (այդ թվում՝ հափշտակման (ներառյալ տրանսպորտային միջոցի առանձին մասերի և սարքավորումների հափշտակման, վանդալիզմի կամ խուլիգանության դեպքերը)) ապահովագրության (այսուհետև՝ կասկո),

ավտոապահովագրության պայմանագրով նախատեսված ավտոմեքենայի օգտագործմամբ վարորդի և (կամ) ուղևորների՝ դժբախտ պատահարներից ապահովագրության, ինչպես նաև սույն կետում նշված և (կամ) այլ նմանատիպ ռիսկերի տարբեր համակցություններ պարունակող ապահովագրության պայմանագրերը:

ԳԼՈՒԽ II. ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՍՊՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4. Ապահովագրական ընկերությունները ռեգիստր տեղեկատվություն են տրամադրում CBANet համակարգով՝ ավտոապահովագրության բոլոր պայմանագրերի, ապահովադիրների, ավտոապահովագրության պայմանագրում նշված ավտոմեքենաների, ինչպես նաև ավտոապահովագրության պայմանագրերով ապահովագրական պատահարների և հատուցումների վերաբերյալ կենտրոնական բանկի կողմից մշակված էլեկտրոնային ձևանմուշով: Ներկայացվող տեղեկատվության բովանդակությունը, դրա լրացման կանոնները սահմանվում են սույն կարգի հավելված 1-ով:
5. Ապահովագրական ընկերությունները ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում իրենց կողմից կնքված բոլոր ավտոապահովագրության պայմանագրերի վերաբերյալ՝ պայմանագրի գործողության մեջ մտնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում: Ռեգիստրին արդեն իսկ տրամադրված տեղեկատվության յուրաքանչյուր փոփոխության դեպքում (ներառյալ պայմանագրի լուծման դեպքերը) ապահովագրական ընկերությունը ռեգիստր է ներկայացնում այդ փոփոխությունները՝ դրանք կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:
6. Ապահովագրական ընկերությունները ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում ապահովագրական պատահարների բոլոր ծանուցումների վերաբերյալ՝ ապահովագրական պատահարի մասին ապահովագրական ընկերության տեղեկանալուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:
7. Ապահովագրական ընկերություններն ապահովագրական պատահարների (ներառյալ այն իրադարձությունները, որոնք հետագայում չեն համարվել ապահովագրական պատահար (դեպք)) վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում են ռեգիստրին՝ տվյալ ապահովագրական ընկերության ապահովագրության կանոններով սահմանված կարգով ապահովագրական պատահարի վերաբերյալ փաստաթղթերի հավաքագրումից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:
8. Ապահովագրական ընկերությունը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի վրա հասնելու դեպքում կատարված ապահովագրական հատուցումների վերաբերյալ ռեգիստրին տեղեկատվություն է տրամադրում՝ հատուցումն իրականացնելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հատուցումը միանվագ չէ, ապա տրամադրվում է տեղեկատվություն տվյալ պատահարի վրա հասնելու հետ կապված յուրաքանչյուր վճարման վերաբերյալ՝ վճարումը կատարելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:
9. Ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում ռեգիստրը տեղեկատվություն տրամադրած ապահովագրական ընկերությանը տեղեկացնում է անճշտության մասին: Ապահովագրական ընկերությունն անճշտության մասին տեղեկանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ռեգիստրին է տրամադրում ճշգրտված տեղեկատվությունը կամ հաստատում է տրամադրված

տեղեկատվության ճշտությունը:

10. Սույն կարգի իմաստով ոչ ճիշտ տեղեկատվություն է համարվում ռեգիստր ներկայացվող այն տեղեկատվությունը, որը չի համապատասխանում սույն կարգի հավելվածներով սահմանված ձևերին, ֆորմատներին և(կամ) պարունակում է տվյալների հակասություն, անհամապատասխանություն:
11. Գործող ապահովագրական ընկերությունները ռեգիստր տեղեկատվություն են տրամադրում սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո գործող բոլոր ավտոապահովագրության պայմանագրերի վերաբերյալ, իսկ նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունները՝ ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու պահից:

ԳԼՈՒԽ III. ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՍԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ

12. Ռեգիստրին տրամադրված տեղեկատվության օգտագործողներն են Կենտրոնական բանկը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները, ապահովադիրները և սույն կարգով սահմանված այլ օգտագործողներ:
13. Ապահովագրական ընկերությունների կողմից ռեգիստրից տեղեկատվության ստացման ձևաթերթերը, դրանց լրացման կանոնները սահմանվում են սույն կարգի հավելված 7-ով:
14. Յուրաքանչյուր ապահովադիր ռեգիստրից ստանում է միայն իր վերաբերյալ տեղեկատվություն, որի ստացումն իրականացվում է սույն կարգի հավելված 7-ով սահմանված ձևաթերթով և դիմումի (հայտի) հիման վրա:
15. Սույն կարգով սահմանված տեղեկատվության այլ օգտագործողներ են հանդիսանում սույն կարգով սահմանված հրապարակային տեղեկատվության օգտագործողները:

ԳԼՈՒԽ IV. ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՍԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

16. Ռեգիստրի կողմից տրամադրվող տեղեկատվությունը բաժանվում է երկու մասի՝ հրապարակային և ոչ հրապարակային:
17. Հրապարակային տեղեկատվությունը ներկայացվում է ընդհանուր վիճակագրական աղյուսակների տեսքով՝ առանց ապահովադիրների վերաբերյալ անհատական տեղեկատվության և կարող է հրապարակվել Կենտրոնական բանկի ինտերնետային էջում և (կամ) այլ միջոցներով:
18. Ոչ հրապարակային տեղեկատվությունը վերաբերում է ապահովագրական ընկերությունների հաճախորդներին և ապահովագրված տրանսպորտային միջոցներին: Ոչ հրապարակային տեղեկատվություն ստանալու իրավունք ունեն միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական ընկերությունները և ապահովադիրները՝ սույն կարգով սահմանված ձևով և դեպքերում: Ոչ հրապարակային տեղեկատվությունը բաժանվում է երկու մասի՝ ընթացիկ և պարբերական:
Ընթացիկ տեղեկատվությունը բաժանվում է երկու խմբի՝
ա. հաճախորդի վերաբերյալ (հավելված 2),
բ. տրանսպորտային միջոցի վերաբերյալ (հավելված 3):
Պարբերական տեղեկատվությունը բաժանվում է երեք խմբի՝
ա. ապահովադիրների վերաբերյալ (հավելված 4),
բ. տրանսպորտային միջոցի վերաբերյալ (հավելված 5),

գ. ապահովագրական պատահարների և հատուցումների վերաբերյալ (հավելված 6):

19. Սույն կարգի 18-րդ կետի տեղեկատվությունից բացի, ապահովագրական ընկերությունն ապահովագրական սակագներ հաշվարկելու և այլ վերլուծություններ իրականացնելու նպատակով ռեգիստրից կարող է ստանալ ցանկացած բովանդակությամբ ամփոփ տեղեկատվություն՝ ռեգիստրում առկա տեղեկատվության հիման վրա: Սույն կետում սահմանված տեղեկատվությունը ստանալու համար ապահովագրական ընկերությունը գրավոր դիմում է Կենտրոնական բանկի՝ ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանում՝ կից ներկայացնելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված գումարի վճարումը հաստատող փաստաթուղթը: Կենտրոնական բանկի՝ ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանումը ապահովագրական ընկերության դիմումի հիման վրա ձևավորում և հինգ աշխատանքային օրվա ընթացքում, իր կողմից սահմանված ձևով, ապահովագրական ընկերությանը տրամադրում է համապատասխան ոչ ստանդարտ հաշվետվություն:
20. Ռեգիստրի կողմից տրամադրված ապահովադրի (հաճախորդի) վերաբերյալ տեղեկատվությունը ապահովագրական ընկերությունը օգտագործում է բացառապես այդ ապահովադրի (հաճախորդի) հետ ապահովագրական պայմանագիր կնքելիս, ապահովադրի անհատական սակագինը հաշվարկելիս, հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ դեպքերում:
21. Ռեգիստրի կողմից տրամադրված տրանսպորտային միջոցի վերաբերյալ տեղեկատվությունը ապահովագրական ընկերությունը օգտագործում է բացառապես այդ տրանսպորտային միջոցը ապահովագրելու վերաբերյալ որոշում կայացնելիս, հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ դեպքերում:
22. Կենտրոնական բանկը կարող է սահմանել ռեգիստրի կողմից ավտոապահովագրության պայմանագրով նախատեսված որոշակի տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների կողմից այդ տեղեկատվության օգտագործման այլ կարգ ու պայմաններ:
23. Ապահովագրական ընկերությունը ապահովադրի (հաճախորդի) մասին ռեգիստրից տեղեկատվություն ստանալու համար հարցում կատարելու դեպքում՝ հարցում կատարելու պահից սկսած երեք տարվա ընթացքում պահպանում է այդ ապահովադրի (հաճախորդների) վերաբերյալ այն փաստաթղթերը, որոնք հավաստիացնում են, որ տվյալ անձը դիմել է ապահովագրական ընկերությանը ավտոապահովագրության պայմանագիր կնքելու նպատակով, կամ ավտոապահովագրության պայմանագիր կնքելու դեպքում պահպանում է այն:
24. Այն դեպքերում, երբ ռեգիստրից ստացված տեղեկատվությունում առկա են անհամապատասխանություններ տեղեկատվությունը ստացած ապահովագրական ընկերության մոտ առկա տվյալների համադրմամբ, ապահովագրական ընկերությունն այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկի՝ ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանմանը՝ անհամապատասխանությունները ճշգրտելու և ճշգրտված տեղեկատվությունը տրամադրելու նպատակով:
25. Ռեգիստրից ապահովադրի (հաճախորդի) վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում ապահովագրական ընկերությունը տվյալ ապահովադրի պահանջի դեպքում նրան տրամադրում է ռեգիստրից ստացված տեղեկատվությունը:
26. Ապահովադրի իրավասու է նաև անմիջապես ռեգիստրից ստանալ իր մասին ռեգիստրում առկա տեղեկատվությունը (հավելված 2): Ռեգիստրից

տեղեկատվության ստացման համար ապահովադիրն առձեռն ռեգիստր է ներկայացնում գրավոր դիմում-հայտ (հավելված 7)՝ կից ներկայացնելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված գումարի վճարումը հաստատող փաստաթուղթ: Ապահովադիրի՝ իրավաբանական անձ լինելու դեպքում դիմումը ստորագրվում և կնքվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Ապահովադիրի՝ ֆիզիկական անձ լինելու դեպքում դիմումին կցվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Ռեգիստրի կողմից սույն կետով նախատեսված դիմումը բավարարվում է դիմումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

27. Սույն կարգի 26-րդ կետով սահմանված դեպքում դիմողը տեղեկատվությունը ստանում է առձեռն: Տեղեկատվությունը ստանալու համար ապահովադիրը (կամ նրա լիազորված անձը) պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև լիազորագիր: Այն դեպքերում, երբ ներկայացված դիմումը և(կամ) դրան կից փաստաթղթերը թերի են, կամ դիմումը ներկայացրած անձն իրավունք չունի պահանջել տվյալ տեղեկատվությունը, դիմումը գրավոր ձևով մերժվում է ռեգիստրի վարման համար պատասխանատու Կենտրոնական բանկի ստորաբաժանման կողմից, իսկ դիմողի կողմից մուծված վճարը չի վերադարձվում: Դիմումի և(կամ) դրան կից փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմողը կարող է լրացնել կամ փոփոխել փաստաթղթերը և կրկին դիմել ռեգիստրին՝ առանց լրացուցիչ վճարում կատարելու: Ռեգիստրի կողմից փաստաթղթային եղանակով տրամադրվող տեղեկատվությունը ստորագրվում է ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից: Ղեկավարի բացակայության դեպքում փաստաթղթերը ստորագրում է ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանման տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու աշխատակիցը:
28. Ռեգիստրից իր կարծիքով ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում ապահովադիրը կարող է գրավոր տեղեկացնել ռեգիստրին՝ նշելով կասկած հարուցող տվյալները և պահանջել ճշգրտված տեղեկատվությունը: Ռեգիստրը, տվյալների արժանահավատությունը ստուգելուց և հարկ եղած դեպքում ճշգրտումներ իրականացնելուց հետո գրավոր ձևով պատասխանում է ապահովադիրին՝ տրամադրելով ճշգրտված տեղեկատվությունը՝ դիմումը ստանալուց հետո վեց աշխատանքային օրվա ընթացքում:
29. Ռեգիստրից տեղեկատվություն ստանալու համար վճարվող սակագների չափերը և դրանց վճարման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, որով տարբեր տեղեկատվության և օգտագործողների համար կարող են նախատեսվել տարբեր վճարներ:
30. Ռեգիստրին տրամադրված տեղեկատվությունը ապահովագրական ընկերությունը պահպանում է էլեկտրոնային եղանակով՝ առնվազն 7 տարի:

**ՊԼՈՒՄ V. ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

31. Ապահովագրական ընկերությունները ռեգիստրին տրամադրում են ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն:
32. Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար պատասխանատու է տեղեկատվությունը տրամադրող ապահովագրական ընկերությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ անարժանահավատ տեղեկատվությունը տրամադրել են ապահովադիրը կամ այլ անձինք:
33. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով

ավտոապահովագրության պայմանագրերից բխող ռիսկերը այլ ապահովագրական ընկերությանը փոխանցելու դեպքում, փոխանցված ավտոապահովագրության ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը ռեզիստր է ներկայացնում այդ ռիսկերը ստանձնած ապահովագրական ընկերությունը: